# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 179-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.20758 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 97-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝

1. Վայք համայնքի Հերհեր բնակավայրում գտնվող, քաղաքացի Գրիշա Հրաչիկի Հունանյանին սեփականության իրավունքով պատկանող 10-028-0118-0019 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.20758 հա մակերեսով հողամասի հողատեսքը վարելահողից փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ այգի (խառը):
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի՝ սեփականության իրավունքի գրանցման նոր վկայական ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vaykt0wn@mail.ru

*12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 180-Ա

### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.45 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 97-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Հերհեր բնակավայրում գտնվող, քաղաքացի Գրիշա Հրաչիկի Հունանյանին սեփականության իրավունքով պատկանող 10-028-0118-0024 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.45 հա մակերեսով հողամասի հողատեսքը խոտհարքից փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ այգի (խառը):
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի՝ սեփականության իրավունքի գրանցման նոր վկայական ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992892
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 181-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 30.06.2023Թ-Ի ԹԻՎ 121-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 29.08.2023Թ-Ի ԹԻՎ 162-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի ղեկավարի 30.06.2023 թվականի թիվ 121-Ա որոշման հղման մեջ «33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով,» բառերից հետո ավելացնել «Ինչպես նաև Վայք համայնքի ավագանու 19.01.2023 թվականի «Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 7-Ա որոշմամբ.» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:

2.Վայք համայնքի ղեկավարի 30.06.2023 թվականի թիվ 121-Ա որոշման բովանդակության մեջ «Վայք համայնքի ղեկավարի 31.03.2022 թվականի թիվ 49-Ա » բառերի փոխարեն գրել «Վայք համայնքի ղեկավարի 31.08.2022 թվականի թիվ 169-Ա » բառերը, այնուհետև ինչպես տեքստում:

3.Վայք համայնքի ղեկավարի 29.08.2023 թվականի թիվ 162-Ա որոշումը ճանաչել չեղյալ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹևՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 182-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԷԴԻԿ ՄԻՍԱԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 6.4 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող հանգուցյալ Էդիկ Միսակի Գրիգորյանին պականող բնակավայրերի նպատակային նշանակության 6.4 քմ մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության տարածքը հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճ.11 շենք, 61 տարածք:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 183-Ա
## «ՆԱԱՆԴ» ՍՊԸ-Ի ԵՎ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 27.09.2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 0.23098 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱՍՈՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 217-րդ հոդվածի 1-ին մասի, Ջերմուկի համայնքապետարանի և «ՆԱԱՆԴ» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված՝ սերվիտուտի N գ/մ1933 պայմանագրի , հաշվի առնելով վարձակալ՝ «ՆԱԱՆԴ» ՍՊԸ-ի տնօրեն Ն. Բաբայանի դիմումը (մտից N Բ-42, 14.09.2023 թ.).

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սույն թվականի սեպտեմբերի 19-ից երկկողմանի համաձայնությամբ լուծել Ջերմուկի համայնքապետարանի և «ՆԱԱՆԴ» ՍՊԸ-ի միջև 2020թ. սեպտեմբերի 27-ին կնքված հողամասի սերվիտուտի պայմանագիրը՝ Վայք համայնքի Հերհեր բնակավայրում գտնվող, 0.23098 հա հողամասի մասով /վկայական՝ N 01102020-10-0005/
2.Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 184-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնով և ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները սահմանելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն, 1994 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 462 -Նորոշումներն ուժը կորցրած ճանաչելու եվ 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1023-Ն որոշմամբ սահմանված գործակիցները՝

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաքի Ա.Մելիքյան փողոց, 1-ին նրբանցք, 1/28 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող ավտոտնակը 28,2 քմ ընդհանուր մակերեսով՝ զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.00314 հա մակերեսով հողատարածքով, գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով վաճառել քաղ. Մինաս Ռուբենի Մինասյանին ՝ շինության համար՝ 40 100 /28.2 x 1422/ (քառասուն հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ և հողատարածքի համար՝ 58 960 /31,4x1877.7/ (հիսունութ հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ արժեքով:
2. Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 185-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի ԹԻՎ 165-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Անվավեր ճանաչել Վայք համայնքի ղեկավարի 2023թ. օգոստոսի 31-ի «Քաղաքացի Արտաշես Նորիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառուցված շինության օրինականացման մասին» թիվ 165-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 186-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՂԱՍԻ ՌԱՖԱՅԵԼԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԱԶՆԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 22 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի և հիմք ընդունելով ՀՀ «Վայոց ձորի մարզ» նոտարական տարածքի նոտար Ս. Փ. Պողոսյանի կողմից 30.07.2023 թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի ուղղված վկայագրերը և Վայք համայնքի բնակիչ՝ լիազորագրով հանդես եկող Հմայակ Ֆրանսի Ռուշանյանի դիմումը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ճանաչել քաղաքացի Աղասի Ռաֆայելի Առուշանյանին /ծնված 17.08.1970թ./ սեփականության իրավունքը՝ Վայք համայնք, Նոր Ազնաբերդ, 1-ն փողոց, 22 հասցեում գտնվող բնակելի տան՝ հարակից օժանդակ շինություններով և այն սպասարկող 0.39490 հա մակերեսով հողամասի նկատմամբ /ծածկագիր՝10-034-0002-0002/:
2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և օժանդակ շինությունները, ընդհանուր մակերեսը՝ 98.8 քմ, կառուցվել են մինչև 2001թ-ը, դրանք կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսրքի 60-դ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, շինության պահպանումը չի հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, միաժամանակ՝ փաստացի ավել չափագրված հողամասը ընտանիքին սեփականաշնորհված ընդհանուր հողաբաժնի չափի գերազանցում չի արձանագրում:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից՝ հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի չափագրման փաստացի արդյունքներ՝ ըստ Ա/Ձ Անդրանիկ Ներսիսյանի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերի և շինությունների բնութագրի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 187-Ա

## «ԷԼԻՏ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՐԿՈՒ ՄԻԱՎՈՐ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. . «ԷԼԻՏ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, առանձին միավոր հանդիսացող բն. Սարավանի 8-րդ փ. 2 հասցեում գտնվող 3.10343 հա /ծածկագիր՝ 10-039-0307-0077/ և բն. Սարավանի 8-րդ փ. 4 հասցեում գտնվող 3.10013 հա /ծածկագիր՝ 10-039-0307-0076/ հողամասերը միավորել և ճանաչել մեկ միավոր:
2. . Սույն որոշման 1-ին կետում նշված մեկ միավոր հանդիսացող հողատարածքը հասցեավորել՝ որպես Վայք համայնք, բն. Սարավանի 8-րդ փ. 2/1 հողամաս:
3. Դիմել ՀՀ Կադաստրային կոմիտե սույն որոշման առաջին կետում նշված գույքի նկատմամբ պետական գրանցում կատարելու և Կադաստրային քարտեզում ուղղում կատարելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**